ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 դեկտեմբերի 2022 թվականի N 530-Ա

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՆԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄԻ ՇԱՐՔ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Սյունիքի մարզի Կապան համայնքի Ներքին Հանդ բնակավայրի մի շարք բնակիչների՝ 28.12.2022թ. Սյունիքի մարզպետին ուղղված դիմումները՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Սյունիքի մարզի Կապան համայնքի Ներքին Հանդ բնակավայրի՝ Սյունիքի մարզպետին դիմած բնակիչներին «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N3 հավելվածի 01 բաժնի 08 խմբի 01 դասի 05՝ «Մարզերում առաջնահերթ լուծում պահանջող ծրագրերի իրականացում, որի արդյունքում լուծում կտրվի բնակչության և համայնքների սոցիալական նշանակություն ունեցող հիմնախնդիրներին» ծրագրով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի համար նախատեսված ծախսերի «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով սահմանված ֆոնդից հատկացնել 4 500 000 (չորս միլիոն հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով ապահովել վերոնշյալ՝ 4 500 000 (չորս միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի վճարումը հավելվածում նշված քաղաքացիներին:

28 12.2022

X

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

Подписано GHUKASYAN ROBERT 37128002290

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 28
ք. Կապան